ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

Հ/Հ	Թեստային առաջադրանքի ձև	Հարց կամ խնդիր	Օրինակ
1.	Ճիշտ պատասխանի ընտրություն	Նշել ճիշտ պատասխանը	Ո՞ր բառում կա ուղղագրական սխալ: 1) առօրյա 2) ապորինի 3) ոլորել 4) նախօրոք
2.	Այլընտրանքային ընտրություն	Պատասխանել «Այո» կամ «Ոչ»	Ճի՞շտ է արդյոք, որ պետական մարմինների տնօրինության տակ գտնվող անձնական տվյալները կարող են փոխանցվել օտարերկրյա պետական մարմիններին միայն միջպետական պայմանագրերի շրջանակներում: 1) «Այո» 2) «Ոչ»
3.	Համապատասխանության որոշում	Դասավորել ըստ համապատասխանության	Համապատասխանեցնել աշխարհի լավագույն ուղեղային կենտրոնների ցանկում ընդգրկված կենտրոնները և դրանց ծագման երկրները: 1. Չեթմ Հաուս (Chatham House) Ա. ԱՄՆ 2. Բրյուգել (Bruegel) Բ. Միացյալ Թագավորություն 3. Բրուքինգսի ինստիտուտ (Brookings International) Գ. Բելգիա 1) 1-Ա, 2-Բ, 3-Գ 2) 1-Բ, 2-Գ, 3-Ա 3) 1-Ա, 2-Գ, 3-Բ 4) 1-Գ, 2-Ա, 3-Բ
4.	Հաջորդականության որոշում	Դասավորել ճիշտ հերթականությամբ	Դասավորե՛ք միջազգային պայմանագրերին ընթացք տալու փուլերը ճիշտ հերթականությամբ: Ա. Փոխհամաձայնեցում Բ. Վավերացում կամ հաստատում Գ. Ներպետական համաձայնեցում Դ. Կնքում 1) Ա, Բ, Գ, Դ 2) Գ, Ա, Դ, Բ 3) Բ, Դ, Ա, Գ 4) Դ, Գ, Բ, Ա